№ 254 ԿԻՐԱԿԻ, 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 254

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտ. (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՈՎԻՉ ՄԱՆԹԱՇԵԱՆԸ ԻՐ ԶԱՒԱԿՆԵՐՈՎ, յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ երկուշաբթի, նոյեմբերի 16-ին, հանգուցեալ

ԴԱՐԻԱ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՆԱ

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

մահվան քառասնօրեակին, Վանքի մայր եկեղեցում տեղի կունենայ ՊԱՏԱՐԱԳ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ:

Պատարագի սկիզբն է առաւօտ. ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը՝ ժամը 12-ին:
(Չ. Կ.) 1224. 2—2

Մանրաշէան Առևտրական Դպրոցի Տեսուչը

սրանով յայտնում է, որ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ազատ տեղերը մտնելու համար ցանկացողների քննութիւնը տեղի կունենայ նոյեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին: Ուսման կիսամեայ վճարն է 20 րուբլի:
(Չ. Կ.) առ. 1226. 2 2

Հասարակ փաթեթերով

Ցանկութիւն բարձր տեսակի

Ծխախոտի ոչ մի ֆաբրիկա չէ կարող մրցել ՑԱՏԿՈՒԹԵԱՆ կողմից՝ վերջերս բաց թողնված պապիրօսների հետ—

ДРУЖБА և ТОВАРИЩЪ 20 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.

ԱՄԵՆ ՕՐ ՍՊԱՌՎՈՒՄ Է

200,000 ՀԱՏ

Վաճառվում է ամենուրեք

ԾԽԱԽ. ՖԱԲՐ. Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ և ՈՐԴԻՔ.

(Ն. Կ.) առ. 1222. 10—2

ՀԱՒԼԱԲԱՐԻ «ՆՈՐ-ԴՐԱՄԱ» ԹԱՏՐՈՆ

ՎԱՐՉ. ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ

Հայ դերասանական «ՆՈՐ-ԴՐԱՄԱ» ընկերութիւնը՝ ռեժիսսեօրութեամբ Ամօ-Խարազեանի

Կիրակի, նոյեմբերի 14-ին

կը ներկայացնէ

ՇԻԼԼԵՐԻ 150-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՍԷՐ և ԽԱՐԴԱՒԱՆՔ

Ողբերգ. 5 գործ.

Նախ քան ներկայացումը Գ. Լեոնեանը կը խօսէ Շիլլերի մասին:

ԱՊՕԹԷՕԶ

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին.
Տեղերի գները՝ 80—10 կ., օթեակ՝ 2 ր և 3 ր.:
Հերթապահ կառավարիչ՝ Յ. Ազարար
(Կ.) 1230. 1—1

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՈՐ

ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ

Գալով այս ձմեռ Թիֆլիսում, ընդունում է ներքին և ջղային հիւանդներ:
Ցերեկվայ 1—3 ժ., երեկոյեան 6—8 ժ.
Լերմօնտօվսկայա փող., տ. 21, բն. № 2.
Տելեֆոն № 221.
(Օ. Մ.) առ. 1231. 3—1

ԳՈՐԾՆ. ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՄԻՍՏՐՕՎԱՅԻ

Օլգինսկայա, 6, Ռազգօննայա պօստի մօտ
Ընդունվում են աշակերտուհիներ II գրուպայի համար: Առաջին ընթացաւարտների քննական ճաշը տեղի կունենայ նոյեմբ. 21-ին:
առ. 1232. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԿՐՈՒԺՕԿ

Երեքշաբթի, նոյեմբերի 17-ին

Յօգուտ II Իգական Կիրակնօրեայ Դպրոցի Հայկական մասի

կը ներկայացվէն

I

„Бабье дѣло“

կօմեդիա 2 գործող.

II

„Կրրր-Կրրր“

ՊԱՐԵՐ

Սկիզբը երեկ. 8½ ժամին:
Տեղերի գները 3 ր. մինչև 50 կ.:
Տոմսակները կարելի է ստանալ Կրուժօկի շվէյցարից:
(Կ. Ե.) (առ.) 1228. 2—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՈՆՈՒՄ

Հայ դերասանական ընկերակցութիւնը
Երկուշաբթի, նոյեմբերի 16-ին,
Յօգուտ Կանանց Որբախնամ Ընկերութեան Անդրկովկասում
Կը ներկայացնէ

I

Գեղեցկուհու խորհրդաւոր ապանողը

Կամ

ԲԱՐԻ ԴԱՏԱՒՈՐԸ

Կօմ. 3 գործ., Բիսսօնի, թարգմ. Վ. Տիրացեանի.

II

ՇԵՂՎԱԾՆԵՐ

Դրամատիկական էտիւդ 1 գործ. հեղ. Մ. Մանուէլեանի.
Մասնակցում է ամբողջ խումբը:
Տեղերի գները բարձրացված են:
Սկիզբն ուղիղ ժամը 8-ին
Ռեժիսսեօր՝ տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ
(ու. Չ. Կ.) (առ.) 1221. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների խորհուրդը յայտնում է ի տեղեկութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ ժողովարանի գրասենեակը ձեռնարկել է տալու 1910 թ. համար տոմսակներ, ուստի և խնդրվում է հոգալ վաղօրօք նորոգել հները: Նորոգելու համար վերջնական ժամանակ որոշված է դեկտեմբերի 14-ը: Ժողովարանի գրասենեակը բաց է ամեն օր՝ երեկոյեան ժամը 8-ից մինչև 10-ը: (8, 15, 21) (առ.) 1210. 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ

Ն. Ս. ՕՐԻՄԲՕՎՍԿԻ

Կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններ:
Ընդունելութիւնը ամեն օր՝ երեկ. ժամը 4—7-ը: Պետրոս Մեծի փողոց, № 26, գեներալ-նահանգապետի դիւանատան դիմաց:
(Ե. Ն. Կ.) (առ.) 1217. 11—2

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.

Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե. Ն. Կ.) (առ.) 1045. 100—24

ՈՂՋՈՅՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Այսօր Թիֆլիսում բացվում է Գիւղատնտեսական Համագումարը:

Նրա քննութեանն են առաջարկված մի շարք էական խնդիրներ՝ վերաբերեալ մեր երկրի տնտեսական կեանքին:

Համագումարի ծրագրի աջող իրագործութեան համար կարևոր է, որ նրա պարապմունքներին մասնակցեն գործին հմուտ ու տեղեակ անձեր և այնպիսի որոշումներ կայացնեն, որոնք բղխում լինեն մեր երկրի պայմանների քաջ գիտակցութիւնից և գործադրութեան նպատակայարմար եղանակների ճիշդ ըմբռնումից:

Այդ հանգամանքը էական է և կարևոր:

Բայց համագումարները, բացի այդ հիմնական պարագայից, աչքի առաջ ունեն և մի ուրիշ նպատակ, այն է՝ համախմբման միջոցով կապ հաստատել երկրի գործողների մէջ, փոխադարձ շփումներ առաջ բերել նրանց մէջ, ընդհանուր ձեռնարկութիւնների և գործակցութիւնների համար դիւրութիւններ մշակել:

Այս երկրորդ պարագան աւելի կարևոր է ներկայ դէպքում գաւառական գործողների վերաբերութեամբ, որոնք մանաւանդ մեզանում զրկված են յաճախակի հանդիպումներից և շփումներից երկրի միւս մասերի գործողների հետ:

Թէ Ռուսաստանի և թէ մանաւանդ Արևմտեան Եւրոպայի համագումարները, [illegible] տալով մարդկանց միասին քննելու իրանց հետաքրքրող խնդիրները, ծանօթանալու փոխադարձաբէս միմեանց գործունէութեան հետ, յաճախ առիթ են հանդիսացել նոր կարևոր սկզբնաւորութիւնների և ընդարձակ ձեռնարկութիւնների իրականացման:

Եւ համագումարների շնորհիւ կարելի է եղել մեղմացնել և ոչնչացնել այն մենակութեան կղզիացած դրութիւնը, որի մէջ շատ անգամ լինում է գաւառական գործողը շաբաթներ և ամիսներ շարունակ՝ կտրված հանդիպումներից ուրիշ գործողների հետ:

Համագումարների ժամանակ մարդիկ հաղորդում են միմեանց այն դիտողութիւնները, խորհրդածութիւնները և կարիքները, որոնք ուրիշ միջոցով հանդէս չէին գայ շուտով և անկարող կը լինէին նպաստել կատարելագործութիւններին և բարւոքումներին:

Համագումարների մի երրորդ նշանաւոր բարեմասնութիւնն այն է, որ նրանց միջոցով և նրանց առիթով հասարակութիւնը մի որոշ ժամանակ կենտրօնանում է մի շարք կարևոր խնդիրների վրա և ծանօթանում է իր գործողների հետ, որոնք սովորական կենցաղավարութեան օրերում մնում են աննկատելի ընդհանուր հետաքրքրութեան համար և չեն կարողանում հանդէս դնել իրանց լուրջ աշխատանքների արդիւնքները:

Չը պէտք է մոռանալ և այն, որ համագումարները մեծ խրախոյսներ են հանդիսանում թէ գոյութիւն ունեցող գործողների համար և թէ ապագայ գործողների նոր շարքեր կազմելու համար:

Սրանից ոգևորվելով ներկայ համագումարի բացումը՝ մենք սիրում ենք հաւատալ, որ նրան կաջողվի պարզաբանել մեր երկրի մի քանի խոշոր կարիքների էութիւնը, մշակել բարւոքումների միջոցներ մեր տնտեսական կեանքում և նպաստել մեր կուլտուրական ոյժերի համախմբման՝ երկրի տնտեսական-հասարակական վերածնութեան համար:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլիս, 13 նոյեմբերի

Բուլգարական դեսպանն այցելեց արտաքին գործերի մինիստրին և յայտնեց, որ բուլգարական կառավարութիւնը չափազանց թանգ է գնահատում Թիւրքիայի բարեկամական յարաբերութիւնները և ցաւում է, որ Մալինովի և Պաշիչկովի արտասանած ճառերը, որոնք նպատակ ունեն աւելի անկեղծ յարաբերութիւններ ստեղծել, բոլորովին հակառակ ազդեցութիւն արին:

Մինիստրների խորհուրդը, լուրերին նայած, միանգամայն գոհ է մնացել այդ բացատրութիւնից:

Բ. Դրան շրջաններում միջադէպը համարվում է սպառված: (Հ. Գ.)

Պարիզ, 13 նոյեմբերի

Պատգամաւորների պալատը ներքին գործերի մինիստրութեան ելևմուտը քննելուց յետոյ ընդունեց գաղտնի ֆօնդերի յօդուածը: Քուէարկութեան ժամանակ Բրիանը դրեց վստահութեան հարցը: Պալատը ընդունեց վստահութիւնը 364 ձայնով ընդդէմ 125-ի: Նախահաշւի բոլոր յօդուածներն ընդունվեցին: (Հ. Գ.)

Լոնդօն, 13 նոյեմբերի

Պատգամաւորների պալատում Բալֆուրը առարկեց շատ առաջարկութիւնների և միևնոյն ժամանակ զգուշացրեց լորդերին սխալ քայլ չանել:

Երեկոյեան լորդերի պալատի առաջ տեղի ունեցաւ ցոյց 6000 ցուցարարներ դիմեցին դէպի պարլամենտ և սուլեցին վերին պալատի անդամներից մի քանիսին, որոնք դուրս էին գալիս շինութիւնից: Ոստիկանութիւնը ցրեց ցուցարարներին: Ոստիկանների շղթան կտրելու փորձը չաջողվեց: (Հ. Գ.)

Լոնդօն, 13 նոյեմբերի

Բէյտէրին հեռագրում են Պեկինից, որ կառավարութիւնը հրաման տուեց մայրաքաղաքի և գաւառական պաշտօնեաներին, որ ճշգրութեամբ կատարեն բոլոր սահմանադրական ձեռնարկութիւնները: Հրամանը նպատակ ունի հաւատացնել ժողովրդին, որ պետական խնամակալը ցանկանում է գործադրել հանգուցեալ կայսրի խոստումները:

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԸ ԵՒ ԶԵՄՍՏՎՕՆ

Վերջին տարիներս հայ հասարակութեան շրջանում մեծ հետաքրքրութիւն են շարժել գիւղատնտեսութիւնը և անտառագործութիւնը:

Մինչև կիրագործվէին թէ առաջինը և թէ երկրորդը, մեծ ջանքեր և ուժեղ կամք էր հարկաւոր այդ դժուար հարցը առաջ տանելու և գործին առաջադիմութիւն տալու:

Ով գործին շատ թէ քիչ ծանօթ է, կամ թէ գործին մօտ է եղել, նա կիմանայ, թէ որքան դժուար է անկիրթ, ագէտ ժողովրդի մէջ նորութիւն, փոփոխութիւններ մացնելը, որը մարդկանց այն սովորական յուսահատութեան մէջ է գցում, որ այլ ևս ցանկութիւն և ոյժ չէ մնում շարունակելու:

Բայց կայ մէկը, որը ամբողջ 30 տարի իր ջանքերը և ոյժը չէ խնայում իր սիրած և փայփայած գործին:

Այդ մեր ամենքից յարգված Ալ. Քալանթարն է:

Բայց ասված է, որ «մէկ ծաղկով գարուն չի լինի»:

Որքան մեծ լինի Ալ. Քալանթարի գործունէութիւնը և նրա օրինակին հետևելով մի քանի անհատների անձնազոհութիւնը, այսուամենայնիւ այդ բոլոր գործողութիւնները մի կուլտուրական նախապատրաստութիւն են մեծ ժողովրդի համար և հիմք չեն ունենայ, մինչև որ չի մտնի մեզ մօտ զեմստվօն:

Որքան մեծ զրկանքներով և դժուարութիւններով է ինտելիգենտ ուսուցիչը կախ մղում նոյնիսկ տարրական բաների համար ագէտ գիւղացու հետ, որ կարողանում է մի բան առաջացնել. բայց բաւական է, որ հեռանայ այդ ուսուցիչը, և ամեն բան էլի կործանված, մոռացված կը լինի:

Այնպէս որ՝ զեմստվօյի հաստատումը կամրապնդէ այն նախապատրաստութիւնները, որոնց հիմքը դրված է յարգելի Ալ. Քալանթարի ջանքերով, որին և գալիս ենք մենք այսօր շնորհաւորելու իր 30-ամեայ յոբելեանը:

Օլգա Գենջեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դիշէ գիւղ (Շուշու գաւ.), 1 նոյեմ.

Արդէն երկրորդ օրն է, ինչ մեր գիւղում խուզարկութիւններ են կատարվում ոստիկանութեան ձեռքով:

Խուզարկվել են բազմաթիւ տներ, ի միջի այլոց և եկեղեցին, որի տանիքն ու յատակը ամբողջովին քանդել են, առարկելով թէ՝ գիւղի բոլոր զէնքերը թագցրված են եկեղեցում:

Խուզարկութեան ժամանակ ոչինչ չը գտնվեց. ուրայն վերադարձան իրանց տեղերը:

Ուսումն. տարուց անցել է երկու ամիս, բայց մեր դպրոցը դեռ ևս փակ է. մատաղ սերունդը թափառում է փողոցներում, իսկ դրա մասին մտածող չը կայ: Հին հոգաբարձական կազմը լուծված է և նորն ընտրված, բայց սա էլ իր նախորդից աւելի ապիկար դուրս եկաւ: Հոգաբարձութիւնը թեմական վարչութեան կողմից ուղարկված ուսուցչին ամբողջ քառն օր քաղցած թողեց, որ հեռացաւ ֆիզիքապէս կազմալուծվելուց յետոյ:

Գիւղումս խիստ տարածվել է մառնութիւնը. քօսավա, գողեր, գիւղական գրագիր՝ բոլորը մի-մի թագաւոր դարձած սանձարձակ իշխում են խեղճ գիւղացիների վրա: Ահա մեր ներկայ կեանքի նկարագիրը:

Փազան

Լագօդախ, 8 նոյեմբերի

1894 թ. Լագօդախում վախճանվեց տեղացի Յար. Զուրաբեանը: Հանգուցեալի եղբայր՝ Ծղալոբ Զուրաբեանը նուիրեց 400 ռ. Լագօդախի հայոց եկեղեցու գանձին: Հոգևոր իշխանութեան հրամանով հանգուցեալը թաղվում է եկեղեցու գաւթում և Թիֆլիսի կօնսիստօրիան ստանում է հանգուցեալի եղբայր Ծղալոբից 400 ր.: Շնորհիւ տեղիս հասարակութեան անտարբերութեան, այդ գումարը չէ ստանում Լագօդախի եկեղեցին, ուստի իշխանութիւնը այդ փողը յատկացնում է Շողակաթի վանքի նորոգութեանը: Անցնում են տարիներ: Հանգուցեալի եղբայրները բերում են գերեզմանաքար հանգուցեալի գերեզմանի վրա դնելու, սակայն հասարակութիւնը չէ թողնում պահանջելով նորից փող, չը նայելով որ կօնսիստօրիայից իրաւունք կայ: Երկար տարիներ քարն ընկած է գերեզմանից մէկ արշին հեռու. եղբայրները վախենում են քար դնել, որովհետև սպառնում են գլորել գերեզմանից: N. N.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 13 նոյեմբերի

17-րդ նիստը բացվում է իշխան. Վոլկոնսկու նախագահութեամբ:

Տեղական դատարանի բարենորոգման առիթով ընդհանուր վիճաբանութիւններն աւարտված են:

Խօսքը տրվում է զեկուցանողին:

Զեկուցանող Շուբինսկին, բանաձևելով բոլոր խօսակցութիւնները, մատնանշում է, որ նախագծի հիմնական կէտերի հետ չը համաձայնվելու կենտրօնական խնդիր հանդիսանում է այն հարցը թէ ինչ տեսակ է լինելու բարեփոխված դատարանը—կօլլեգիալ, թէ եզական: Զեկուցանողն ապացուցանում է դատարանի կօլլեգիալ ձևի անպէտքութիւնը՝ թէ ներքին բովանդակութեամբ և թէ ֆինանսական տեսակէտից. և կարծում է, որ այդ ձևի դատարանի ժամանակ հաշտարար դատաւորը հասնում է շրջանային գրագրի աստիճանին: Ընդգծելով զեմստվօների հանրօգուտ գործունէութիւնը, որոնք միանգամայն վայելում են ազգաբնակութեան վստահութիւնը, զեկուցանողը սկսում է առարկել առաձին հռետորներին: (Ծափ. կենտրօնից և ձախից, աջ մասի աջից):

Քուէարկութեան նկատմամբ Բերեզովսկին յայտնում է, որ աջակողմեանների ֆրակցիան անգոհացուցիչ է համարում գոյութիւն ունեցող շրջանային դատարանները և համաձայն չէ նախագծի հիմունքների հետ. ուստի ֆրակցիան ձայն կը տայ յօդուածային ընթերցմանը անցնելու դէմ:

Զիւբչինսկին ասում է, որ աշխատաւոր խմբակը, գտնելով որ նախագիծը տեղական դատարանին տալիս է դասակարգային ընաւորութիւն և սահմանում է ստացուածքային ցէնզ և եզակի դատարան, բայց և այնպէս յոյս ունի ուղղումներ մտցնելով լրացնել պակասները, ձայն կը տայ յօդուա յօդուածային ընթերցման։

Քուէարկութիւն.—Ձայների մեծամասնութեամբ ընդդէմ աջակողմեանների ֆրակցիայի և զանազան ֆրակցիաների մի քանի առանձին անդամների՝ հերթական ընթերցմանը անցնելը ընդունվում է. տեղական դատարանի վերակազմութիւնը Սիբիրի նահանգների ու շրջանների և Արխանգելսկի նահանգի վերաբերմամբ ընդունվում է։ Առաջադիմականների առաջարկած բանաձևը մերժվում է 172 ձայնով 138-ի դէմ։

Ժամը 4 և 10 րոպէին յայտարարվում է ընդմիջում։

—

Նիստը վերսկսվում է ժամը 4 և 49 րոպէին։

Քննութեան է առաջարկվում ներքին գործերի մինիստրի ներկայացրած օրինագիծը կեանքի անձեռնմխելիութեան մասին։

Զամըսլօվսկին զեկուցանում է նախագծի հիմնական կէտերը և մատնանշում է, որ ընդհանուր հիմունքները, որոնցով հաստատվում են անձնաւորութեան անձեռնմխելիութիւնը, արդէն կան հիմնական օրէնքների մէջ, բայց դրան վերաբերող յօդուածները ցրված են օրէնքների ժողովածուի մէջ և մասամբ հնացել են։ Այժմ անհրաժեշտութիւն է ներկայանում հրատարակել առանձին օրէնք։ Սկզբունքով այդ անհրաժեշտութիւնը ընդունվում է բոլորից։ Այնուհետև նա թւում է նոր օրինագծի առանձին նորմաները (որոնք իր ժամանակին հաղորդվեցին Հեռագրական Գործակալութեան միջոցով)։

Մակլակօվը կարծում է, որ կեանքի անձեռնմխելիութեան օրէնքը ներկայանում է մանիֆէստի կատարումն, ուստի և գլխաւոր ուշադրութիւնը պէտք է կենտրոնացնել հէնց այն երաշխաւորութիւնների վրա, որոնցով ապահովվում է օրէնքի խոստումների իսկութիւնը։ Պէտք է յիշել, որ առանց այդ օրէնքի էլ կան բազմաթիւ օրէնսդրական նորմաներ, որոնցով կեանքի անձեռնմխելիութիւնը ապահովվում էր, բայց այդ օրէնքները կամ ուղղակի խախտվում էին կամ հնանում։ Ի՞նչ են առաջարկում այժմ։ Հռետորը առանձնապէս կանգ է առնում այն ծանօթութեան վրա, թէ նոր օրէնքը չէ վերաբերում քաղաքական յանցաւորներին. այդ ծանօթութիւնը, [illegible] Մենք պէտք է յիշենք, որ ամբողջ մանիֆէստը պատասխան էր ինքնին քաղաքական դժգոհութեան դէմ, իբրև պետական խաղաղութեան միջոց։ Այժմ նրանից դուրս հանել քաղաքական յանցաւորներին, կը լինէր աղաղակող անարդարութիւն։ Պէտք է հաստատուն երաշխաւորութիւններ տալ, որ օրէնքը ճշդութեամբ կը գործադրվի։

(Բուռն ծափեր կենտրոնում և ձախից)։

Նախագահը յայտնում է, որ գրվել են 77 հռետորներ։

Գեգեչկօրին կարծում է, որ ռուսական իրականութեան բնորոշ կողմ հանդիսանում է մարդկային անձնաւորութեան իրաւունքների և արժանապատուութեան ոտնահարումը. այն ժամանակ, երբ տիրող դասակարգերի չնչին խմբակը վայելում է ոչ միայն անձի անձեռնմխելիութիւն, այլ և այնպիսի օրինականութիւն, որով չէ կարող երաշխաւորել ոչ մի habes corpus, բոլոր մնացած ռուս ազգաբնակութիւնը զրկված է ամենատարրական մարդկային իրաւունքներից և քաղաքացիական ազատութեան երաշխաւորութիւններից. «Մենք, սօցիալ-դեմօկրատներս, երբէք չենք տարվել սահմանադրական պատրանքներով, և այժմ, չորս տարի անցած, հանդիսաւորութեամբ խոստացված խոստումներից յետոյ, սահմանադրական ցնորքների կողմնակիցները մեզ հետ միասին կանգնած ջարդված դաշտի մօտ՝ կարող են վկայել, որ մեզ մօտ ոչ մի ազատութիւն չը կայ։ Բաւական է պատասխանել հարցին, որի դէմ ուղղված են սուր ռեպրեսսիաները, որպէսզի միանգամից հնար լինի թագցնել կառավարական քաղաքականութեան ամբողջ ստատը։ Միթէ ազատութիւններից զուրկ է ռուս ժողովրդի միութիւնը, մեր հասարակութեան այդ թարախաբոյնը, այդ՝ ամեն կողմից յանցաւոր կազմակերպութիւնը» (ուժեղ աղմուկ աջից։

Նախագահը.—Դումայի անդամ Գեգեչկօրի, եթէ Դումայի աջակողմեան անդամներից մի քանիսը չեն կարողանում զսպել իրանց և նկատողութիւններ չանել, դուք գոնէ ձեռնպահ մնացէք ձեր այդ տեսակ խօսքերից։

Գեգեչկօրին շարունակում է. «Ծայրայեղ աջակողմեանների համար քաղաքական ազատութիւնների իրականացումը հաւասար է նրանց քաղաքական մահվան. չափաւոր-աջակողմեանները, որոնց աւելի լաւ կը լինի անուանել կատաղի-չափաւորներ, իրաւական կարգի կողմնակիցներ են լոկ խօսքով։ Աւելի լաւ չեն և հօկտեմբրեանները, որոնք իրանց անուանում են սահմանադրականներ, սակայն ըստ էութեան նրանք պաշտպանում են կառավարութեան հակասահմանադրական քաղաքականութիւնը։ Այն դէպքում, երբ ոչ կառավարութիւնը, ոչ ադմինիստրացիան, ոչ դատարանը ոչ մի երաշխաւորութիւն չեն տալիս կեանքի անձեռնմխելիութեան համար, ձեր նախագիծը չարամիտ, յանցաւոր ծիծաղ է կեանքի անձեռնմխելիութեան մասին։ Այդ նախագծով դուք վախճանական կէտին էք հասցնում միայն քաղաքացիական ազատութեան բոլոր անդրդուելի հիմունքների թաղման սերիան։ Այդ թաղման հանդէսներին մասնակցել ոչ միայն մենք, այլև աւելի կամ պակաս կարգին լիբէրալները և դեմօկրատները, ի հարկէ, չեն կարող։ Կեանքի անձեռնմխելիութիւնը պատկանում է հասարակական իրաւունքի այն ինստիտուտներին, որոնց ինքնակամօրէն չէ տալիս տիրապետող դասակարգը, այլ ձեռք է ձգում ժողովուրդը, և մենք էլ կեանքի անձեռնմխելիութիւն ձեռք կը բերենք ռուսական երկրորդ մեծ յեղափոխութեան հզօր ուժերի վրայով... (ծափ. ձախից)։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Նոյեմբերի 13-ին Թիֆլիսի նահանգական դատարանի 2-րդ քրէական բաժանմունքում քննվեց Թիֆլիսի ոստիկանապետի դիւանատանը կից գտնվող խուզարկու բաժնի նախկին կառավարիչ Վ. Մաչինսկու գործը, որ մեղադրվում էր քրէական պատժագրքի 447-րդ յօդուածի 2-րդ կէտով։

Նահանգական դատարանը Մաչինսկուն ճանաչեց մեղաւոր անցեալ տարի մայիսին և յունիսին անհիմն կերպով այն երկու հոգուն ազատելու մէջ, որոնք գողութիւն էին արել նահանգական դատարանի անդամ Կօվաչից և գնդապետ Ա. Լազրէվից, և կրկին մի անյայտ հրէայի, և դատապարտեց նրան պաշտօնազրկութեան։

—

Նոյեմբերի 26-ին Երևանի քրէական դատարանում նշանակված է հայ հասարակութեանը ծանօթ ալէքսանդրօպօլցի Վահան Ջանլաթեանի և Աւետիք Մովսիսեանի գործի քննութիւնը։ Ջանլաթեանին պաշտպանելու է երդ.-հաւ. Դօլուխանեանը, իսկ Մովսիսեանին՝ Ց. Տէր-Մարտիրոսեանը։

—

Կարս, 6 նոյեմբերի

Ամսիս 6-ին զինուորական դատարանը վեց տարի աքսոր վճռեց մեր քաղաքին յայտնի Պետիկին, որ մեղադրվում էր պետական զէնքեր առնելու և վաճառելու մէջ։ Վճռից յետոյ հէնց որ Պետիկին պահապաններով շրջապատված դահլիճից դուրս էին բերում բանտը տանելու և շղթայելու, լօթին նապաստակի արագութեամբ դուրս թռաւ պահապանների միջից և անյայտացաւ։ Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երէկ, նոյեմբերի 14-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի ծննդեան օրը, զինուորական Ալէքսանդրօ-Նեվսկի տաճարում մատուցվեց պատարագ և կատարվեց մաղթանք, որի ժամանակ Արսէնալի սարից 21 անգամ թնդանօթ պարպեցին։ Պատարագին և մաղթանքին ներկայ էին Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը, կոմսուհին, Փոխարքայի շքախումբը, զինուորական և քաղաքացիական նահանգապետները, բոլոր զօրամասերի հրամանատարները, գեներալիտէտը և ուրիշ զինուորական, ինչպէս նաև քաղաքացիական ու հասարակական հիմնարկութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչներ։ Նոյն օրը մաղթանքներ կատարվեցին Վանքի աւագ եկեղեցում, կաթօլիկների և բողոքականների աղօթատներում, հրէաների սինագօգում, մահմէդականների մզկիթում և այլն։ Քաղաքն առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան հրավառված էր։

◆ Այսօր ցերեկով հանդիսաւորութեամբ բացվում է Կովկասի գիւղատնտեսների համագումարը։

◆ Կուրանի շրջանի կառավարիչը Կովկասի Փոխարքայի դիւանատան հարցումին ի պատասխան յայտնել է, որ այս տարի հացի բերքը այդ շրջանում ստացվեց ընդհանուր առմամբ միջին։ Եթէ 1910 թւի գարնանը խնդրագրեր ստացվեն անբաւարար բերք ստացած տեղերից, այն դէպքումն էլ օգնութիւն կը տրվի տեղական հասարակական ցորենի պահեստի խանութներից։

◆ Ներկայումս յատկապէս ձեռնարկված է մի շարք աշխատանքների Կովկասում անտառապահութեան գործը լաւ հիմքերի վրա դնելու։

◆ Վաղը Թիֆլիսի քաղաքային դումա [illegible] քաղաքային քարտու [illegible]

◆ Հրէայ մանրավաճառները խնդրամատոյց են եղել Թիֆլիսի նահանգապետին, որ թոյլ տրվի իրանց առևտուր անել կիրակի օրերը առ. ժ. 10-ից մինչև երեկ. ժամը 5-ը։

◆ Թիֆլիսի քաղաքային սանիտար-բժիշկների խնդրանօք ոստիկանապետը կարգադրել է քաղաքի մի քանի մասերում փակել առևտրա-արդիւնաբերական հաստատութիւններից մի քանիսը քաղաքային վարչութիւնից վկայականներ չունենալու պատճառով։

◆ Նոյեմբերի 24-ին Արտիստական Ընկերութեան վերին դահլիճում Ալ. Խատիսեան դասախօսութիւն կը կարդայ հետևեալ թեմայով. «Լէօնիդ Անդրէեվի «Անֆիսան» և «Անաթէմա»։ Հասոյթը կը յատկացվի կովկասեան կանանց բարձրագոյն դասընթացքներին։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի կարգադրութեամբ որոնվում է անցեալ օրն անյայտացած Ֆրանց Օտտօվիչ Մադէրը, որ ուսանում է Թիֆլիսի 1-ին գիմնազիայի 2-րդ դասարանում։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է մեծ քաղաքների օրինակով կազմել Թիֆլիս քաղաքի բոլոր տեսարանների, շինութիւնների և հաստատութիւնների ալբոմ։ Այդ առիթով մասնակցելու հրաւիրված են լուսանկարիչ Երմակօվը և Աբէլեան ու Կօզնօվսկի ինժեներները։

◆ Ստացանք «Նոր Դպրոց» ամսագրի հոկտեմբերի (№ 10) համարը։ Ուշադրութեան արժանի է ի թիւս մի քանի յօդուածների նաև Տէր-Գրիգորեանի «Բար. Ընկ. և Կուլ Միութ. դպրոցները մեզանում» տեսութիւնը, որից քաղուածք կանենք հետևեալ անգամ։

◆ Ստացանք «Տարազ» պատկերազարդ հանդէսի №№ 9—10-ը։ Հանդէսը, ըստ իր սովորութեան, զարդարել է իր էջերը պատկերներով, որոնց մէջ նկատելի են Ֆերրէրի, Լոմբրօզոյի, Շիլլէրի, Էլէօնօրա Դուզէի, Կոլցօվի, Ալ. Մատինեանի պատկերները և նկարներ՝ Դաղստանի կեանքից, սրա նուաճման 50-ամեակի առիթով։ Տրված է ընտիր թղթի վրա, մաքուր և գեղեցիկ։ Զետեղված է նաև Եղիշէ Թոփչեանի պատկերը նրա մահվան առիթով։ Սակայն ինչ հարկ կար նրա մասին խօսելիս զանազան էկսկուրսիաներ կատարել անորոշ ձևակերպութիւններով։ Երբ հնարաւորութիւն չկայ ամեն բան ճիշդը, ճշմարիտը ասել, աւելի լաւ է լռել։

◆ Կարսից մեզ գրում են. «Մեզանում կատարեալ գարուն է. դաշտերը, պարտէզները, այգիները, կտուրները նորից ծլել ու ծաղկել են։ Ոչ մի մայիս այնքան գունեկան կանաչներ չէ արտադրել, ինչպէս այժմ նոյեմբերը։ Անցեալ տարի հոկտեմբերի 23-ին կատարեալ սառնամանիք էր, ձմեռը իր վերիշխանութեան մէջ բօբռոզներ էր անում, ամեն ինչ սառել էր, իսկ այժմ ահա նոյեմբերի 13-ն է, դեռ սիրուն արևու գեղեցիկ ծաղիկներն ենք տեսնում։ Երկարատև տեղացող անձրևների շնորհիւ շատ քիչ տներ ազատվեցին կաթելուց։ Այս դէպքում երանի հարուստներին, վայ աղքատներին, որ ապրում են կաթիլքի մէջ»։

◆ Երևանից մեզ գրում են. «Նոյեմբերի 5-ին Ատրպատականի առաջնորդ Նորընծայ Կարապետ եպիսկոպոսը Երևանի վրայով ուղևորվել է Թաւրիզ։ Եպիսկոպոսին Էջմիածնից ուղեկցել են մինչև Երևան իր ընկերները և համակրողները։

«Ամսիս 5-ին լոյս 6-ի գիշերը, առաւօտեան ժամը 4-ին, մի ուժեղ ձայն լսվեց։ Առաւօտեան պարզվեց, որ պարսիկ Մաշադի Իսմայիլի բաղնիքի շոգեկաթսան պատռվել էր շոգիի շատութիւնից և մեքենավարի անուշադրութիւնից։ Ամբողջ բաղնիքը այն [illegible] տեսնողի վրա աւերակի տպաւորութիւն է թողնում։ Վնասը հաշւում են մի քանի հազար րուբլի։

«Ամսիս 11-ին լոյս 12-ի գիշերը, մօտ ժամը 11-ին, զգացվեց երկրաշարժ, որի ցնցումը բաւականին զօրեղ էր։ Ցնցումը րօպէական եղաւ. ասում են, որ մի երկու խարխուլ տուն է քանդվել»։

ԼՈՒՐԵՐ ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Շուտով վրաց դերասանական խումբը Թիֆլիսում խաղալու է Ալէքսաշվիլու (Գոտուայի) «Պարտիւս կացի» (կուսակցութեան մարդ) նոր պիէսը։ Նիւթը վերցված է վերջին յեղափոխութեան դէպքերից. դուրս են բերված ի միջի այլոց կուսակցութեան ագիտատօրներ, կարմիր խմբի մարդիկ. բեմի վրա ցոյց է տրվում միտինգ և այլն։

◆ Դեկտեմբերի 12-ից Թիֆլիսում կը սկսվեն վրաց հոգևորականութեան թեմական ժողովները։

◆ Կախէթիայից հաղորդում են, որ այնտեղ լցվել են մեծ գինեվաճառներ։ Գինին թանգանում է։

◆ Այս տարի Արևմտեան Վրաստանի բերքը շատ սակաւ էր, հացի և միւս հացահատիկների պակասութիւնը այժմվանից զգալի է. մինչև իսկ սովի ուրուականը սարսափեցնում է շատ տեղ։ Քութայիսի նահանգի շատ գիւղերում մինչև դեկտեմբեր հազիւ բաւականանայ եղած հացը. սիմինդրի պուդն արժէ 1 ր. 20 կ.։

◆ Վրաց ազնուականութեան գիմնազիայի վարչութիւնը որոշել էր ծննդեան տօներին բարձր դասարանի աշակերտներին էքսկուրսիայի տանել Քութայիս։ Երկաթուղու վարչութիւնը ճանապարհածախսի հարկաւոր զիջում չէ անում իբրև մասնաւոր գիմնազիայի. այդ պատճառով գիմնազիայի վարչութիւնը չէ կարողանում իրագործել իր մտադրութիւնը։

◆ Փոխարքայի դիւանատունը առաջարկել է Թիֆլիսի և Քութայիսի նահանգական և գաւառական վարչութիւններին, որ շուտով մասնաժողովների միջոցով տեղեկութիւններ հաւաքեն ազգաբնակութեան տնտեսական դրութեան մասին, կազմեն և ուղարկեն լիակատար տեղեկութիւններ այս տարվայ բերքի մասին։

◆ «Մշակի» 248-րդ համարում տուինք «Նոր գաղթ դէպի Կովկաս» փոքր յօդուածը։ Այն խնդիրը, որ Վրաստանի զանազան կողմերում նոր-նոր ռուսական և գերմանական գաղութներ են հաստատվում և այդպիսով վրացիներին պատկանած ընդարձակ հողաբաժիններ անցնում են օտարներին, վրաց գիտակից հասարակութեանը անհագին մտահոգութիւն է պատճառում։ Մամուլը զբաղված է այդ հարցով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Վաղվայ ներկայացումը պէտք է գրաւիչ լինի մեր հասարակութեան համար, թէ իր բարեգործական նպատակով և թէ նոր պիէսներով։ Ներկայացումը կը տրվի կանանց Որբախնամ Ընկերութեան օգտին։ Կը խաղացվեն Բիսսօնի «Գեղեցկուհու խորհրդաւոր սպանողը» և գերման-հեղինակ Մ. Մանուէլեանի «Շեղուածներ» դրամատիկական ուսումնքը։

—

Ուրբաթ, նոյեմբերի 13-ին, Զուբալօվի քաղաքային տան մէջ կայացաւ Նոր երաժըշտական ընկերութեան բացումը և կօնցերտ՝ նուիրված Չայկօվսկու յիշատակին։ Դահլիճը զարդարված էր Չայկօվսկու պատկերով ծաղիկների մէջ և ողողված էլեկտրական լոյսով։ Բացման հանդէսը կատարվեց երաժշտագէտ Տէր-Դաւթեանի ներածական ճառով, որի մէջ նա այն միտքն էր արտայայտում, թէ մինչև այսօր երաժշտութիւնը, որ այնքան մեղմացնող և ազնւացնող ազդեցութիւն ունի մարդկանց վրա, եղել է բաժին միայն ունևորների, արիստօկրատների, մինչ ժողովրդական մասսան անմասն է մնացել։ Այժմ, նախաձեռնութեամբ իշխան Ալ. Մ. Արղութեանի հիմնվում է մի երաժշտական ընկերութիւն, որի նպատակն է տալ ժողովրդին երաժըշտական վայելք, կազմակերպելով մատչելի գներով համերգներ, օպէրաներ ժողովրդի համար։ Անդամակցական վճարը՝ տարեկան մի րուբլի է։ Ապա Մաքսիմօվ կարդաց մի դասախօսութիւն Չայկօվսկու մասին, որից յետոյ տեղի ունեցաւ համերգ, մասնակցութեամբ Պալիէվի, Շէքուէվի և տիկիններ Նաւասարդեանի, Մարցենկեվիչի և այլոց։ Թատրոնը ծայրէ ծայր լի էր։

Նոր ընկերութիւնը արժանի է ամենայն աջակցութեան և խրախուսանքի։ Ոչ ոք այնքան պէտք չունի երաժշտութեան ազնւացուցիչ ներգործութեան, քան ժողովրդա

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՕԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կ. Պոլիս, 14 նոյեմբ.

Դեռ մեռելներու հանգստարանը չայցելեցի, սակայն տասը օր առաջ՝ Գալաթա-սարայէն մինչև Շիշլիի բացատաները մեռելներու յիշատակը կարթննար ամենուս մէջ. մեռելոցի օր էր, նոյն օրը կառքերուն թափօրը մեռելապսակներով ուշադրութիւն կը գրաւէր, և ես կը թերթէի Մկրտիչ Աճէմեանի՝ Ալիշանի աշակերտ բանաստեղծի՝ ինծի նուիրած քերթուածներու հատորը, ուր «Ծեր գինովի» բանաստեղծութիւնը զիս մեռելներուն յիշատակով կը կապէր։ Մեռելոցի օր է. ծեր գինովը, անօթի և անզգեստ, սակայն քէն ու գանգատ չունի. բաւական է որ մէկ մատ գինի գտնէ. անհաւատ կըլլայ, եթէ մատ մը գինի չգտնէ, ծերուկի պէս անոր կինն ալ պառաւ՝ գինով էր. քառասուն տարուան այդ ընկերը մեռած էր. միշտ նօթի ու մերկ են եղած, բայց ո՛չ երբէք գինիէն զրկուած. և մեռելոցի օրը կը մտածէ ծերուկ գինովը.

«Ա՜խ տէրտէր մը գտնեմ խըման,
Օրհնել կուտամ իր գերեզման,
Արցունք չելլար աչքէս ծլատ.
Իր հոգին տամ գինի մէկ մատ»։

Բանաստեղծ Աճէմեանը ինծի կըսէր, որ իրականութենէն առած է այս քերթուածին նիւթը. իրօք եղած է այդ ծեր գինովը, որ, առէջ գերեզմանատուն երթալով, իր պառաւ կնկան հողվլոտիքը կօրհնէր բագոսական արարողութեամբ. հոն հետը կը տանէր շիշ մը գինի, կէսը ինքը կը խմէր և կէսն ալ իր պառաւ կնկան գերեզմանին կը խմցնէր... Եւ այդ ծեր գինովին վերջին կտակը կըլլար.

«Երբոր մեռնիմ՝ տակառ մը լայն
Բերէք դագաղ, շիշ մը երկայն
Դրբէք կօթող ու իմ աչքաս
Թաղիս տուէք գինի մէկ մաս»։

Այդ ծեր գինովը հիմա մեռած է, սակայն ո՞վ պիտի կատարէր իր խօլ կտակը. հոս ծանօթ գինով տէրտէր մը և վարդապետներ կան։ Մեռելոցի օրը չյիշեցին սակայն անմեղ գինով ծերուկին փափագը։ Շատ զարմացած եմ տեղացի եկեղեցականներու գինեմոլութեան վրայ. բարեբաղդաբար սակաւաթիւ են անոնք։

Գայթակղական է եկեղեցականներու ծոցին մէջ գինով պաշտօնեաներ գտնուիլը, գայթակղական է նաև գինով քնարերգութիւնը. Աճէմեան իր յատուկ տեսակցութեամբ, անոյշ լեզուով կը խնդրէր, որ չը գայթակղիմ իր երգած ծերուկ գինովին վրայ. և ինծի կը պատմէ յիշեալ դէպքը. ինչ լաւ կըլլար եթէ բանաստեղծները իրենց հրատարակութենէն իբր նախաբան՝ կցէին պատմական ծանօթութիւններ՝ իրենց երգած մութ դէպքերուն վրայ. Աճէմեան եթէ չընէր իր գինով ծերուկի պատմութիւնը, իրականութիւնը գուշակելու համար հարկ էր մարգարէական հոգի։ Ես շնորհակալ եղայ իր մեկնութեանց և հարցուցի իրեն, թէ ընդհանրապէս ո՞ր բանաստեղծները աւելի սիրած է։

— Լամարտինը,—պատասխանեց,—և շատ կը սիրեմ նաև Վիկտոր Հիւգօն և Բէրանժէն։

Ես գիտել տուի։

— Ձեր քերթուածներուն մէջ երկու տիեզերահռչակ քերթողներու՝ Լամարտինի ու Հիւգոյի անոյշ արձագանգը արդէն ակնյայտնի է, սակայն Բէրանժէի կնիքը չունիք։

Ես տեսայ, որ այս բացատրութիւնս այնքան անուշ չանցաւ։

— Բերանժէ մարտիկի մարտնչող կորով մը ունի. դուք պատերազմող չէք,—բացատրեցի ես։

Աճէմեան պատասխանեց.

— Ես սիրած եմ միշտ փափուկը և անոր համար՝ խմելու բառի գործածելէն իսկ զգուշացած եմ. զոր օրինակ, բնաւ կիրարկած չեմ ըմբոշխնեմ բայը։ Ընդհանրապէս բանաստեղծութիւններս գրած եմ այն պարագաներուն մէջ, երբ զգածուեր եմ. անընական ըլլալէն խորշած եմ. օրը օրին գրուած քերթուածներ են հաւաքածուիս մէջ եղածները. մտադրութիւն չունէի զանոնք հատորով հրատարակելու։ Ռուսահայ բարերարի Պալեան Յովհաննէս մեկենասի աջակցութեամբ՝ անոնք հիմա լոյս տեսան. սակայն տպագրութիւնը հին ըէժիմի օրով կատարուելուն համար, այդ հատորէն կը պակսին հայրենասիրական քերթուածներս։ Իմ մեկենասս կրկին կրկին կը թախանձէ, որ, միւս ամեն գրուածներուս աջակցի իր դրամական օգնութեամբ։

Հարցուցի.

— Ազգասիրական քերթուածներէն և «Վահագն» դիւցազներգութենէն զատ դեռ ուրիշ աշխատութիւններ ունի՞ք։

— «Վահագն» դիւցազներգութիւնը տասնութը տարեկան հասակիս գրած եմ, և զայն ցոյց տալով հ. Արսէն Բագրատունի վարդապետին՝ արժանացայ իր թանկագին գնահատումին։ Հրատարակած եմ Լամնէի «Գիրք ժողովրդեան» և «Ձայն ի բանտէ» երկերուն թարգմանութիւնը, որոնց համար ընթերցասէր հրատարակիչ ընկերութիւնը նիւթապէս զիս վարձատրած է։ Գրած եմ «Անճարակ պսակ» կատակերգութիւնը, զոր նուիրած եմ Օրթա-գիւղի Բարեսիրաց Ընկերութեան։ Թարգմանած եմ Շիլլէրի «Աւազակները», զոր երեսուն և հինգ տարի առաջ հոս Արևելեան թատրոնին մէջ ներկայացուց Էքշեան թատերական խումբը։ Ունիմ անտիպ քերթողական թարգմանութիւններ Բէրանժէէն, Լաֆոնթէնէն և իտալացի ու ֆրանսացի ուրիշ ծանօթ քերթողներէ։ Անտիպ գրութիւններս հաւաքելու վրայ եմ. հիմա, որ ծերութեան ժամանակս հանգստեան թոշակի արժանացայ, գրականութեան պարապելու ժամանակ պիտի գտնեմ. բայց այս աշխատութենէն առաջ կը փափագիմ Եւրոպա պտոյտի ելլել, և ամենէն աւելի Վենետիկը կուզեմ տեսնել։

«Վենետիկ» բառը իր երեսին վրայ արտափայլեց քերթողական անրջանքի ցոլքը. հոն Ալիշանէն խմած է քնարին հմայքը։

*

Աճէմեան ինծի համար Կ. Պոլսոյ՝ Պէշիկթաշլեանի շրջանին քերթողներու ամենէն վերջին պսպղուն աստղն է, որ ծերուն պատկառելիութեամբը կախուած կը մնայ Վոսփորի դիւթական երկինքէն։ Ժամանակակից և ընտանի քերթողներու խումբը իր մասին միշտ մեծարական յարգանք մը ցոյց տուած է։ Իր դասընկեր հանգուցեալ բանաստեղծ Թովմաս Թէրզեան ամեն առթիւ անհունօրէն գնահատած է Աճէմեանի քնարը. բանաստեղծին «Լոյս և ստուեր» հատորին համար Թէրզեան հիացած կը գրէր. «Ի՜նչ անուշ ոճ, ի՜նչ սրտահոս նուագներ, և ի՜նչ խնդութեամբ ողջունեցի երես մը՝ որուն վրայ դիմակ չկար։ ...Մարդ սիրով կը կարդայ այն տողերն որ գոհութիւն ու գոհունակութիւն կը շնչեն»։ Եւ Թէրզեան՝ Աճէմեանին հետ բանաստեղծ վարպետին, Ալիշան վարդապետին, աշակերտելով՝ սա ընտանի խօսքերը կը շարէ. «Գիտեմ որ եթէ դեռ Ադրիական ափանց վրայ ըլլայինք, մեր մեծ դաստառն՝ Ալիշանն, որ այնչափ զքեզ կը սիրէր իբրև զաւակ իր հայրենասէր ոգւոյն, այս երկասիրութեանդ պատիւ մը պիտի տար»։ Այդ պատիւը Աճէմեանին տուաւ ազգային գրական համախմբուած անկեղծ գնահատութիւնը։ Ծերուն բանաստեղծը իր նահապետ վարպետին պատիւ բերաւ՝ հելլենաշունչ քերթող աշակերտակից Թէրզեանին հետ։

Ե.

կան մասսան։ Նրա գործունէութիւնը կարող է մեծ օգուտներ բերել հասարակ և բանւոր ժողովրդի ինքնազարգացման։

—

Վրաց դրամատիկական ընկերութեան վարչութիւնը դիմել է Թիֆլիսի նահանգապետին, խնդրելով թոյլատրել դերասանուհի Գաբունիա-Ցագարելու յոբելեանը կատարել վրաց ազնուականների թատրոնում։ Աւելորդ չենք համարում յայտնել յոբելեանական հանդէսի կատարման մասին։ Նախ կը լինեն ողջոյններ երաժշտական նուագախմբի, պատգամաւորութիւնների և զանազան ընկերութիւնների, դասային և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչների և մասնաւոր անձանց կողմից. ապա կը մատուցվեն նուէրներ և կը կարդացվեն ուղերձները։ Ցերեկվայ տօնակատարութեան սկիզբն է ժամը 12-ին։ Երեկոյեան ազնուականների թատրոնում կը կայանայ ներկայացում յոբելեարուհու մասնակցութեամբ։ 2-դ և 3-դ գործողութիւնների միջնարարի ժամանակ կը շնորհաւորեն նրա ընկեր-ընկերուհի դերասանները. վերջում կը լինի ապօթէօզ։ Թիֆլիսի նահանգապետն իր հաճութիւնն արդէն տուել է։

—

Ինչպէս լսել է «Н. Р.» լրագիրը, եղբարք Զուբալօվները պատրաստակամութիւն են յայտնել նուիրելու 40,000 րուբլի ժողովրդական տանը կից գտնվող Գոլուբօվսկի հողաբաժինը ձեռք բերելու համար, որի վրա կը կառուցվի ամառային թատրոն և բնակարաններ ժողովրդական տան ծառայողների համար։

—

Դերասանուհի Ն. Գաբունիա-Ցագարելու յոբելեանը տօնելու է նաև Հաւլաբարի վրաց սիրողների խումբը Ամօ-Խարազեանի վարձած թատրոնում։

—

Յայտնի երաժշտական գործիչ Վ. Գ. Կորգանօվը ներկայումս զբաղված է Թիֆլիսի թատրոնի պատմութիւնը գրելու աշխատանքով։

—

Այսօր Հաւլաբարի Նոր-Դրամա թատրոնում Շիլլերի 150-ամեակի առիթով Ամօ-Խարազեանի խումբը կը ներկայացնէ «Սէր և խարդաւանք» ողբերգութիւնը։ Ներկայացումից առաջ Գ. Լևոնեանը կը խօսէ Շիլլերի մասին. ապա տեղի կունենայ ապօթէօզ։

—

Բաթում, 10 նոյեմբերի

Վերջապէս այս ամսի սկիզբներում վերջացաւ հայ-կաթոլիկների նորակառոյց ուսումնարանի շինութիւնը և այդպիսով մի մեծ և զգալի պակաս լրացվեց թէ մեզ մօտ հիւր եկող դերասանների, թէ տեղիս թատերասէրների համար, որովհետև այդ շէնքն ունի շքեղ և մեծ դահլիճ՝ մշտական բեմով։ Այսուհետև երկաթէ թատրոնի կարիքը ոչ կունենանք և ոչ էլ մի ներկայացումը մեզ վրա հարիւրներ կը նստի։

Հայ-կաթոլիկների ուսումնարանի շինութեան աւարտման հետ՝ ամսիս 7-ին կազմակերպվեց մի երեկոյթ, որի երգեցիկ խումբը պատրաստել էր մեր ծխ. դպրոցի նորեկ ուսուցիչներից Արսէն Թոնիբեկեանը։ Խումբը լաւ էր պատրաստված։

Ամսիս 8-ին էլ, նոյն դահլիճում, Աբէլեան-Արմէնեանի խումբը, որը եկել է այստեղ Թիւրքիա անցնելու համար, տուեց մի ներկայացում։ Խաղացին Շիրվանզադէի «Պատւի համար» պիէսան և էլի պատրաստվում են տալու երկրորդ ներկայացումը։

Վ. Մարտիրոսեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Եկեղեցական առողջարանութիւն», բժշկապետ Ա. Բաբայեանի, 1909 թ. *)։

Նորերս մեր ընկերակից բժ. Ղազաղեանը տուեց մեզ՝ մեզ զբաղեցնող հարցի մասին յետագայ վերին աստիճանի հետաքրքրական տեղեկութիւնը, որից երևում է, որ մեր երկրում բժշկական վկայականի գործադրութեան առաջին հեղինակները Կարսի նախկին նահանգապետ Տօմիչ և բժիշկներ Ղազաղեանը և հանգուցեալ Կաճկաճեանն են եղել։

«Կարսի նահանգում զանազան գիւղերի մէջ պատահում են սիֆիլիսի դէպքեր, գլխաւորապէս հայ, թուրք և թիւրքմէն ազգաբնակութեան մէջ. բայց այդ հիւանդութիւնը գլխաւորապէս տարածված էր Կարսի նահանգի Կաղզւանի շրջանի Խորասան գաւառակի գիւղերի մէջ։ Այդ գաւառակը գտնվում է Հայաստանի Բասէն գաւառի արևելեան ստորին մասում, որ կոչվում էր ի հնումն Աբեղանիք։ Այդ գաւառակում գտնվում են Բաշ-գիւղ, Արմուգլի, Ջիւրիկ, Գիւլանթափա, Սթահան և ուրիշ 4—5 գիւղեր, որոնց բնակիչները բոլորն էլ հայեր են։ Սիֆիլիսի հիւանդութիւնը այդ գիւղերում սաստիկ տարածված էր սրանից 25—30 տարի առաջ։ Տեղական բնակիչները պատմում են, որ այդ հիւանդութիւնը իրանց մէջ տարածվել էր շրջակայ գիւղերի չերքէզներից, որոնք 60—70-ական թւականներին գաղթել էին Կովկասից Թիւրքիա։ Վերոյիշեալ գիւղերից Բաշ-գիւղի, Արմուգլիի, Ջիւրիկի և Սթահանի բնակիչները գրեթէ բոլորեքեան վարակված էին այդ հիւանդութեամբ։ 1884 թւին Կարսի նահանգապետ Տօմիչի կարգադրութեամբ ես և բժ. Կաճկաճեանը, ինչպէս շրջանային բժիշկներ, գնացինք հետազօտելու այդ հիւանդութիւնը և մենք 2 շաբաթվայ ընթացքում մանրամասն հետազօտելով և բժշկական քննութեանց ենթարկելով երկսեռ բոլոր բնակիչներին—սկսած ծծկեր մանուկներից մինչև 70—80 տարեկան ծերերն ու պառաւները և քահանաները—գտանք, որ նրանք գրեթէ բոլորն էլ (поголовно) վարակված են այդ հիւանդութեամբ երկրորդ և երրորդ շրջանի (вторичный и третичный періодъ)։ Ներկայիս ձեռիս չունենալով պաշտօնական գրութիւնները, ուր մանրամասն յականէ անուանէ ցուցակագրված էին հիւանդների անունները և թիւը, միայն այսքան կարող եմ ասել, որ չը կար տուն, այդ գիւղերում, որ ազատ լինէր այդ հիւանդութիւնից։ Վերջացնելով մեզ վրա դրված ծառայական պարտականութիւնը, պաշտօնական յայտարարութեամբ հիւանդութեան առաջն առնելու համար առաջարկեցինք երկու միջոց. 1) հիմնել Բաշ-գիւղում (կենտրոնն է մնացեալ գիւղերի) մի սիֆիլիտիկական հիւանդանոց մի մասնագէտ բժշկի խնամատարութեան տակ և 2) ամուսնացող զոյգերին ենթարկել բժշկական քննութեան և թոյլ տալ ամուսնանալու, եթէ զոյգն էլ առողջ է լինում։ Առաջին միջոցը գլուխ չեկաւ, դրամական միջոցների բացակայութեան պատճառով, այլ միայն մի ամառ յընթացս 3 ամսվայ նշանակվեց մի բժիշկ հիւանդներին բժշկելու համար։ Իսկ երկրորդ միջոցը մեծ համակրութեամբ ընդունեց նահանգապետը և պաշտօնական գրութեամբ դիմելով Կարսի Թեմակալ Գրիգորիս եպ. Աղուանեանցին՝ խնդրեց, որ սրբազանը իր կողմից հրամանագրէ այն շրջանի քահանաներին, որպէսզի այս վերջիններս ոչ ոքի չը պսակեն առանց պաշտօնական բժշկի վկայականի։

«Գրիգորիս եպ. Աղուանեանի կարգադրութեան մասին չը գիտեմ յայտնի՞ էր էջմիածնի սինօդին թէ՞ ոչ, բայց այդ մասին եղած պաշտօնական գրագրութիւնները լինելու են Կարսի հոգևոր կառավարութեան գործերի մէջ։ Այդ կարգադրութիւնը կատարվում էր այսպէս. յայտնի է, որ հարսանիքները գիւղացիների մէջ լինում են գրեթէ միշտ ձմեռը, ուստի երբ հաւաքվում էր մի որոշ թիւ նշանադրեալների, գիւղական տանուտէրը և կամ քահանան, դիմելով պաշտօնական գրութեամբ գաւառապետին, խնդրում էր բժիշկ, որը ևս իր կողմից յայտնում էր այդ նահանգապետին, որը նշանակում էր իր ենթակայ բժիշկներից մէկին գնալու և բժշկական քննութեան ենթարկելու նշանադրեալներին. և եթէ քննութիւնից երևում էր, որ նրանցից մէկը հիւանդ էր լինում, այդ տեսակ ամուսնութիւնը արգելվում էր մինչև կատարեալ բժշկութիւնը։ Այդ միջոցը ունեցաւ իր բարերար ազդեցութիւնը, որ պարզ երևաց զինւորագրութեան ժամանակ։ Զինւորակոչը Կարսի նահանգում սկիզբն առաւ 1889 թւին. ես յընթացս 15 տարվան զինւորակոչի բժիշկ էի. այդ և հետևեալ թւականներին վերոյիշեալ գիւղերից կոչված երիտասարդներից առնուազը կէսը, սիֆիլիսով վարակվածներ, չէին ընդունվում զինւորական ծառայութեան մէջ. իսկ վերջերս այդ հիւանդութեան պատճառով ոչ մի անպէտք չէր լինում։ Այժմ եթէ քննութեան ենթարկելու լինէք այդ գիւղերի բնակիչներին (ես մի քանի անգամ դէպք եմ ունեցել քննելու), կը տեսնէք, որ հազւագիւտ է այդ հիւանդութեամբ անձանց թիւը, որովհետև հներն արդէն մեռան, իսկ նորերն ի շնորհս վերոյիշեալ միջոցի առողջ ծնողաց սերունդ են»։

Վերև առաջ բերված տողերը պատկանում են բժ. Ղազաղեանին։

Պրոֆ. Ղէրցէնը, որի գրքի մասին յիշեցինք վերև, գրում է հետևեալը.

«Շվէցիայում ընդունված է և գործադրվում է հետևեալ պարտադիր օրէնքը. տեղական իշխանութիւնը կարող է, երբ հարկաւոր համարէ, ամբողջ ազգաբնակութիւնը գլխովին (поголовно) քննութեան ենթարկել, որը յանձնվում է տեղային բժշկին։ Վերջինը երբ գտնում է վեներական ախտով և սիֆիլիսով հիւանդներ, տալիս է իշխանութեան նրանց ցուցակը, որը կարգադրում է իսկոյն ուղարկել հիւանդանոց, ուր բժշկութիւնը լինում է ձրի... Եթէ որևիցէ մէկը հրաժարվում է այդ բանից, նրան ստիպում են ենթարկվել քննութեան։ Եւ այդ բանը այնքան ժողովրդականացած է, որ ոչ ոք չէ ընդդիմանում այդ կարգադրութեան»։ Բժիշկ Րիբինգը (Рибингъ) գրում է. «Ես երբէք չեմ լսել, որ մեծամասնութիւնը այդ բանը համարէ վիրաւորական և հակառակ անձի ազատութեան. ընդհակառակը՝ ազգաբնակութիւնը շնորհակալ է իշխանութիւնից այդ միջոցների համար։ Վեներական ախտը շատ սակաւ է այդ երկրում»։

«Փառք և պատիւ Շվէցիային»—խօսքերով է վերջացնում իր գրքոյկը պրոֆ. Ղէրցէնը (երես 31—40)։ Դառնանք այժմ մեր ընկերակցի աշխատութեան քննութեան շարունակութեանը, որը ընդհատվեց վերոյիշեալ յոյժ կարևոր տեղեկութիւնների նկատմամբ մեր յօդուածի մէջ։

Հեղինակը բերում է յայտնի պրոֆ. Ֆուրնիէի, նրա աշակերտ պրոֆ. Գօշէնի կարծիքները այն հարցի մասին, որ յաճախ բժիշկները սիֆիլիսի ծածուկ շրջանում դժուարանում են վկայել ամուսնացողների հիւանդ լինելը և այլն։ Գօշէնը ասում է, որ բժշկական վկայականի պարտադիր պահանջումը «չափազանց փափուկ կողմեր ունի և նրա գործադրութիւնը աւելի վնասներ կը բերի (?), քան օգուտ»։

(Վերջը միւս անգամ)

ՖԷԼԻԵՏՕՆ

ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ

—

Կարդում եմ և, Աստուած վկայ, աչքերիս չեմ հաւատում։

Երևանը սկսել է... փիլիսոփայութեամբ զբաղվել։

Կարծում էք կատակ եմ անում. իսկի էլ չէ։

Կարդացէք «Մշակի» 251-դ համարում Գ. Աղաղաղեանի Երևանից գրած թղթակցութիւնը և կը համոզվէք, որ Երևանը սկսել է փիլիսոփայութեամբ զբաղվել։

Այ, ես կարդամ և դուք լսէք.

«Այսօր, առաւօտեան ժամը 12-ին,—գրում է Գ. Աղաղաղեան,—Ե. Ֆրանգեանը բացեց հայկական դասախօսութեան շարքը «Ի՞նչ է փիլիսոփայութիւնը» վերնագրով։ Սա դեռ առաջինն է. այս սէզօնում նա դասախօսելու է... 7—9 անգամ։ Եւ բոլոր դասախօսութիւններն էլ լինելու են փիլիսոփայութեան մասին...»։

Այժմ համոզվեցի՞ք։ Եթէ ոչ, ես կը բերեմ այդ նոյն յօդուածից այլ կտորներ, որոնք կը համոզեն ձեզ՝

ա) որ երևանցիք ոչ միայն լսում են փիլիսոփայութեան մասին դասախօսութիւններ, այլ և... հասկանում են.

բ) որ նրանք ոչ միայն հասկանում են, այլ և այցելում են՝ միանգամից երկու հարիւր հոգով.

գ) որ ոչ միայն այցելում են ու հասկանում, այլ և զարմանում, որ իրանք ընդունակ են հասկանալ այնպիսի խրթին բաներ, ինչպէս օրինակ՝ դեֆինիցիա, անտիկ, իդէօլոգ, էնպիրիկ, մօրալ և այլն և այլն։

Եւ, Աստուած վկայ, նրանք կատարեալ իրաւունք ունեն զարմանալու։

Երևանցի՞ և... փիլիսոփայութի՞ւն...

Փիլիսոփայութի՞ւն և... երևանցի՞...

Ահա ձեզ մի կատարեալ փիլիսոփայութիւն, որի մասին, անշուշտ, գաղափար չունի ինքը՝ Երևանի փիլիսոփայ Ֆրանգեանը, թէև նա հաւատացրել է իր երկու հարիւր հոգի ունկնդիրներին, որ «փիլիսոփայութիւնը первое дѣло... ամեն մէկ մարդու գործն է», նոյնիսկ երևանցու։

Բայց մենք այստեղ կը քաշենք Գ. Ֆրանգեանի փիլիսոփայական փեշը և կասենք.

— Այո, գուցէ և ամեն մի մարդու գործ է, բայց ոչ երևանցու։

Եւ դրա համար մենք ունենք բազմաթիւ պատմական փաստեր։ Պատմեմ։

Սրանից 3—4 տարի առաջ յաճախ լուրեր էին գալիս, նոյնիսկ ինձ հաւատացնում էին, երդւում, որ երևանցիք բոլորն էլ՝ մէր-մանուկ, մեծ ու փոքր, մարդ թէ կնիկ, բոլորը, բոլորն էլ... սօցիալիստներ են դառել... և այն էլ... թունդ սօցիալիստներ։

Եւ երբ ես կասկած էի յայտնում ապշած, անկարելի էի համարում, ինձ ասում էին.

— Գիտէ՞ք ինչպէս պատահեց. եկաւ այսինչ դասախօսը, հաւաքեց բոլորին, երկու թէ երեք կրակոտ դասախօսութիւն կարդաց, և, ո՜վ հրաշք, բոլորն էլ՝ ինչպէս ջուրը շոգի է դառնում մեր աչքերի առաջ՝ աննկատելի կերպով դարձան... 99°-ի սօցիալիստներ։

Ես բերանս բացած, ապշած լսում էի...

«Ա՜խ,—անցնում էր մտքովս,—ինչու, ինչու ես էլ այնտեղ չէի»։

Եւ... անիծում էի իմ բաղդս...

Մի օր այնքան ինձ ասացին, որ վճռեցի վեր կենալ և Երևան գնալ... յատկապէս տեսնելու՝ թէ ինչի՞ են նման այժմ երևանցի սօցիալիստները...

Եւ գնացի... Մտայ քաղաք։ Տեսնեմ՝ նոյն ցեխը, նոյն սոսկալի ճանապարհն ու սարոտ-ձորոտ փողոցները. ձիաքարշի դըժբաղդ ձիերը շարունակում էին նոյն կերպ տանջվել, ինչպէս այդ առաջ էր՝ Երևանի անդը-սօցիալիստական շրջանում. նոյն պարապութիւնը, դատարկութիւնը...

Իսկ մարդի՞կ... նոյն մարդիկն էին, ինչ և սրանից 10—20 տարի առաջ. ոչ մի փոփոխութիւն։

— Ասացէք, խնդրեմ,—դիմեցի ես մի պարոնի, որը իր արտաքինով ամենից աւելի սօցիալիստութեան յոյսեր էր տալիս (ունէր երկար մազեր, լայն փողպատ, սև բլուզ և... հաստ փայտ),—ասացէք խնդրեմ, ընկեր, այսօր կա՞յ արդեօք ձեզնում սօցիալիստական մի ժողով. ես կուզէի...

— Ի՞նչ,—ընդհատեց ինձ հաստափայտ «ընկերը»,—գնա, դրադդ քաշի, ըստեղ ցօցիլ մօցիլ չը կայ, ք՚ սամծը Ալէքսանդրօպոլումն ա։

«Կոնսպիրացիա է»,—անցաւ մտքովս...

— Գիտէք,—ասացի ես,—ես էլ, եթէ կարելի է այսպէս ասել, մասամբ սօցիալիստ եմ, բայց, ի հարկէ, ոչ ձեզ պէս, ուստի, խնդրեմ, ընկեր, ինձ չը մերժէք...

«Ընկերը» ոտքից գլուխ ինձ չափեց և... գնաց, առանց պատասխանելու...

Ես մնացի փողոցում կանգնած...

«Չէ, — անցաւ մտքովս, — молодецъ «տղերք», շատ թունդ են մկրտել սրանց»։

Այնուհետև 5 օր մնացի Երևանում։ Տեսայ բոլորին, ծանօթացայ շատ շատերի հետ, բայց... երդւում եմ պատուովս, ոչ մի հատ սօցիալիստ չը տեսայ Երևանում, նոյնիսկ դեղի համար, այլ բոլորն էլ նոյն Հայրապետեաններն էին, Արշակները, Պօղոսները, Սարգիսները, ինչ որ 10—15—20 տարի առաջ. բոլորն էլ սիրում էին՝ ուտել, խմել, քէֆ անել, ծաղրել սրան ու նրան։

Սիրահար էին՝ խաշի, հարիսայի, Շուստովի կօնեակի, թառով քէֆի, հաւով քաշովու, քուֆթայի, տօլմայի, բայց ոչ երբէք՝ սօցիալիզմի...

Ահա այսպէս էր սօցիալիստ դարձել Երևանը 1906—1908 թւականներին։

Իսկ այժմ... փիլիսոփայութիւնը...

Մի՞թէ իրաւունք չունեմ ես ասելու, ես, որ երևանցուց միևնոյն է՝ ոչ սօցիալիստ դուրս կը գայ և ոչ էլ մանաւանդ փիլիսոփայ, այլ... միմիայն երևանցի...

Եւ այսպէս է ոչ միայն Երևանը, այլ մեր բոլոր գաւառական քաղաքները՝ Գանձակը, Ալէքսանդրօպոլը, Կարսը, Շուշին, որոնք ի զուր տեղը այնքան տուժեցին սօցիալիստ լինելու համար։

Եւ եթէ կայ մի բացառութիւն, դա անկասկած... Շամախին է։ Այնտեղ փիլիսոփաներ՝ ինչքան կուզէք։

Հարցրէք շամախեցուն...

—

Քանի որ խօսեցինք Շամախու փիլիսոփայութեան մասին, ուստի շարունակենք։

Փիլիսոփայութեան դօկտոր Սեդրակ Թառայեանի «Աղրայիլի» ներկայացմանը ես չէի գնացել։

Չէի գնացել նախ՝ որովհետև... տոմսակ չունէի և ապա՝ որովհետև գիտէի, որ փիլիսոփայութեան դօկտոր Թառայեանը, նա՝ որ գտաւ պատմական չորրորդ դասակարգը, թէև կարող էր լինել շատ լաւ փիլիսոփայ, բայց գալով դրամային... туговато...

Բայց հարցը դրանում չէ, այլ մի բնորոշ րեցենզիայում, որ «Աղրայիլի» առիթով արել էր «Մշակի» րեցենզենտը։

Նա այդ առիթով գրում է մօտաւորապէս հետևեալը.—«Աղրայիլի» առաջին գործողութիւնը յոյս էր տալիս. երկրորդը՝ լաւ էր. երրորդում՝ թուլացաւ, չորրորդում՝ փչացաւ, իսկ հինգերորդում... провалился...

Կարդում եմ և մտածում՝ թէ, ճիշդ և ճիշդ նոյն բանն է կատարվում և մեր մարդկանց հետ այստեղ՝ մեր կեանքում.

Առաջին գործողութիւն. գիմնազիստ է, վառվռուն, աշխոյժ... յոյս է տալիս։

Երկրորդ գործողութիւն. ուսանող է, տաք, ջղոտ, ասում, խօսում, ոգևորում է... լաւ է։

Երրորդ գործողութիւն. աւարտել է, բժիշկ է, փաստաբան, ուսուցիչ, ճարտարապետ, բայց... ոչ մի տեղ չէ երևում. թուլացաւ։

Չորրորդ գործողութիւն. պսակվել է, հաստացել, հարստացել, ուռել, ճարպակալել և ժանգոտած փող ու դիրք է ստեղծում. փչացաւ։

Եւ վերջապէս գալիս է հինգերորդ և վերջին գործողութիւնը. փնթփնթում է, արդէն 40 տարեկան՝ 60-ի է նման. արդէն եղջիւրներ ունի, բամբասում է ուրիշներին, կեանքը մի որևէ страховое общество-ում ապահովեցնում է և... կենդանի մեռնում... провалился...

Ճիշդ և ճիշդ «Աղրայիլի» գործողութիւնների նման...

Եւ ինչքա՜ն շատ են մեզանում այդ «կօմիքական դրամաները»։

Նայեցէք ձեր շուրջը։

Ահա մէկը, երկրորդը, երրորդը, տասներորդը, քսաներորդը... Համարել իսկ անկարելի է։

Յոյս էր տալիս, լաւ էր, թուլացաւ, փչացաւ և... անհետ կորաւ...

Ահա այդ կողմից է, որ պէտք է շնորհաւորել մեր դրամատուրգ Ս. Թառայեանին. Նա ստեղծագործում է այնպէս, ինչպէս մեր կեանքն է։

Եւ ի՞նչ, գուցէ, Թառայեան հէնց այդ էլ ուզեցել էր ասել... Սալ-Ման

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օպպօզիցիան Դումային ներկայացրեց մի առաջարկութիւն, որ կանանց իրաւունք տրվի հանդէս գալ դատարաններում իբրև փաստաբաններ։

Արտասահմանեան մամուլում երևացած այն տեղեկութիւնների առիթով, իբր ռուս կառավարութիւնը բանակցութիւններ է վարում ամերիկացի դրամատէրերի հետ ամուրեան երկաթուղագծի և Սիբիրի երկրորդ ճիւղի կառուցումը վերջիններիս յանձնելու վերաբերութեամբ, տեղեկատու բիւրօն լիազօրված է յայտնելու, որ այդ բոլոր լուրերը անհիմն են։

Որսորդների երկրորդ համառուսական համագումարը տեղի կունենայ Մոսկվայում նոյ. 17—24-ը։

Օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացան 2 հոգի. կան հիւանդներ 64։

Սենատը ընդհանուր ժողովում քննեց արդարադատութեան մինիստրի ներկայացրած հարցը՝ կանանց փաստաբանական գործունէութեան մասին։ Ընդհանուր ժողովը գտաւ, որ կանանց՝ փաստաբանական ասպարէզում թոյլ տալու խնդիրը պէտք է լուծվի օրէնսդրական կարգով. ուստի և սենատը բեկեց նահանգական դատարանի 11-րդ բաժնի որոշումը, որով Ֆլէյշիցը թոյլտուութիւն էր ստացել դատ վարելու դատարանում։

Տօմսկը և նահանգը յայտարարված են բարեյաջող խոլերայից։

Փակվեց առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների համագումարը։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային երկրորդ հիւանդանոցին կից հանդիսաւորութեամբ բացվեց կանանց բարձրագոյն դասընթացքների առաջին կլինիկան։

ՕԴԵՍՍԱ։ Ահագին քանակութեամբ տնայնագործութեան իրեր են ստացված Ռուսաստանի կենտրոնական տեղերից և Սիբիրից՝ շարժական ցուցահանդէսի համար։

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ։ Շրջանային զեմստվային խորհրդակցութիւնը Դաղստանի համար կանգ առաւ 1890 թւի տիպի վրա։

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ։ Քաղաքային դուման որոշեց բարձրագոյն կրթական հաստատութիւններում հիմնել 2 թոշակաւորների տեղեր Կոլցօվի և Գօգօլի անուան։

ԲՐԻՒՍԷԼ։ Պատգամաւորների պալատը որոշեց զինւորական ծառայութեան ժամանակը—հետևակում նշանակել 15 ամիս, հեծելազօրում—2 տարի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինւորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մ. ծ. փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ։
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տելեֆօն № 481.
Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 11-ից մինչև 5-ը ցերեկվայ։
ԲՕԺՕՎՍԿԻՑ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։
ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.։
ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։
ԿԱԼԱՄԿԱՐՕՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից։
ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը։
ՊԱՎԼՕՑԿԻՑ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.։
Ե. ԶՈՒԴՆՕՎՍԿԻՑ—ջղային, հոգեկան, էլեքտրօտերապիա երկուշ., չորեքշ., հինգշաբթի 4—5 ժ.։
ՏԷՏՐԱԶԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԿԻՆ ԲԺ. ԽՈՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԱՍՊԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ $11\frac{1}{2}$—$12\frac{1}{2}$ ժ. ցեր.։
ԼԵՎԻ—երեխաների և ներքին, ցեր. ժամը 1—2-ը։
ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ $9\frac{1}{2}$—$10\frac{1}{2}$ ժ. առ.։
Համախորհուրդ, օպերացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնոզ, ստնտուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(Կ.) 991. 100—8

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Հիւանդանոց
Մշտական մահճակալներով
Թիֆլիս, Միխայլովսկի պր., Միքայէլեան հիւ. դիմաց, 59,
տել. 1026
Հիւանդների ընդունելութիւն.
ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւ.։
Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ։
Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ։
Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժամը 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։
Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. ժ. 1—2-ը, կանանց հիւանդ. և մանկաբարձ.։
Ա. Դ. ԿԱԼՄԸԿՕՎԱ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ։
Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնոզով։ Միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումն։ Ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից
(Կ. Ե. Ու.) 236. 100—62

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տելեֆօն № 40.
(Ե. Ու. Կ.) 984. 100—23

---

*) Տես «Մշակ» № 253.

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԻՒՐԳԻՒԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելյամինովսկայա փող № 8

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՅՈՎՀ. ԷՄՄԱՍՍԷՈՍԻ

→ ԷՄՄԱՆՈՒԷԼ ←

Ողբերգ. 5 արարուածով
ԳԻՆՆ Է 80 ԿՈՊ.

Գումարով գնողներին 20% զեղչ, ճանապարհածախսը մեր հաշւին: Հատով ցանկացողները կարող են ուղարկել պոստի մարկաներ: Դիմել՝ Тифлисъ, почт. ящ. № 140, Геворку Бабурянцъ.

(օ. մ.) 1229. 5—1

ՁՐԻ!!! 30 ՕՐ ՁՐԻ!!!

Եթէ դուք 30 օրվայ ընթացքում նոր մեթօդով կազմված մեր ինքնուսույց ձեռնարկով (միւսներինը—ռէկլամ է) չեք սովորի ազատօրէն խօսել, գրել և կարդալ գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն—փողը յետ ենք վերադարձնում: Ձեռնարկի գինը՝ մի լեզուի համար՝ վերադիր վճարով և ճանապարհածախքով—1 ր. 25 կ., 2-ինը՝ 2 ր., 3-ինը՝ 3 ր., 4-ինը՝ 3 ր. 75 կ.: Պատուէրները կատարում է միակ պահեստը Ռուսաստանում—С.-Петербургъ, Офицерская, 50—224, Ф. Словаку. Интернаціональное Бюро иностранныхъ языковъ.

(15, 29) (П. 144279) 1196. 2—1

Թարգմանվում է
Լ. ԱՆԴՐԷԵՎԻ

„ԱՆՖԻՍԱՆ"

(ու. կ.) 1223. 2—1

1910 ԹՒԻ ՀԱՄԱՐ
ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ"

պատկերազարդ շաբաթաթերթի (Բ տարի)

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն: Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն: Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն: Այգեգործութիւն և գինեգործութիւն: Յատուկ բոյսերի մշակութիւն: Մեղուաբուծութիւն և շերամապահութիւն: Բանջարաբուծութիւն: Թռչնապահութիւն: Կօօպերացիա և սպառողական ընկերութիւններ: Գիւղատնտեսական նորութիւններ: Գիւղատնտեսական կեանք: Գրախօսութիւն: Թղթակցութիւններ: Տնայնագործութիւն և տնարարութիւն: Հարց և պատասխաններ: Պօստ-արկղ և յայտարարութիւններ:

Առաջիկայ 1910 թւին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև թիւրքահայ գիւղատնտեսներ:

«Գիւղատնտեսը» 1910 թւի իր տարեկան բաժանորդներին թերթի համարներից դուրս տալու է որպէս նուէր՝

ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ

Բաժնեգինը:

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին . . .	3 րուբլի	Տարին .	4 րուբլի (12 ֆրանկ)
Կէս տարին . .	2 րուբլի	Կէս տարին	2 ր. 50 կ. (7 ֆրանկ)

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ". Արտասահմանից՝ Tiflis (Russie) Rédaction «Guchatntess». (կ. հ.) 1179. 24—5

—○ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ ՊԱՀԵՍՏ ○—

Եղբ. ԵՍԱՂՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ

Թիֆլիս, Միջին փողոց, № 65.

Յայտնում ենք ի գիտութիւն յարգելի վաճառականների և հասարակութեան, որ մեր պահեստում ստացված են մեծ քանակութեամբ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ (галоши) և ԿՐՆԿԻ ՌԷՏԻՆՆԵՐ, զանազան տեսակ ՇԷՎՐՕՆԵՐ, ԲՕՔՍԵՐ (խրօմ) ու ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ—Ռուսաստանի և արտասահմանի արդիւնաբերութիւն, նոյնպէս և կօշկակարների գործիքներ ու կօշկաղեղեր յայտնի ֆիրմաների: Ինչպէս կրկնակօշիկները, նոյնպէս և բոլոր ապրանքները ծախում ենք—մեծաքանակ (оптомъ) գնողներին գործարանային գներով, իսկ հատավաճառը (розничн. продажа) ամենաձեռնտու գներով: Ունենք բաժանմունք ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, որտեղից նոյնպէս կարելի է ստանալ կաշուեղէն և գալանտերէյնի ապրանքներ ձեռնտու գներով: Վարշավայի բաժ. հասցէն՝ Варшава, Лешно № 8, М. Н. Яргулову.

(կ. հ.) 938 30—19

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ

30 ՄՇՏԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՎ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՎ
Կուէնիեվսկայա փող., № 7, սեփ. տ., «ՎԵՑԵԼ» հիւրանոցի մօտ, Տելէֆօն № 590.
Հիւանդներին ընդունում են հետևեալ մասնագէտ բժիշկները.

ԳԱՄԲԱՇԻՁԷ Վ. Դ.—Ներքին եւ երեխ., ամեն օր, բացի կիրակի օր., 11—12 ժ. ցեր.:
ԳԵԴԵՎԱՆԻ Մ. Ա.—ջղային եւ էլեկտր., երկուշ., չորեքշ., ուրբաթ, 10½—11 ժ. առ.
ԳՈՒՐԿՈ Ա. Գ.—Ներքին, շաբաթ՝ 1—2 ժ., կիրակի՝ 11—12 ժ.:
ԿԱՐՇԻՆ Ա. Ա.—կաշուի եւ վեներ., ամեն օր, բացի կիրակի օր., 2½—3½ ժ. ցեր.:
ՆԻԿՈՁԷ Տ. Ս.—Ներքին, երկուշաբ. և ուրբ. 9—10 ժ. առ.:
ՄԱՂԱԼՈՎ Գ. Գ.—Ներքին, երեքշ. և շաբաթ, 10—12 ժ. առ.:
ՄԱՆՍՎԷՏՕՎ. Վ. Մ.—Ներքին, երկուշ., հինգշ. և շաբաթ, 1—2 ժ. ցեր.:
ՄԵԼԻՔՕՎ Ն. Մ.—վիրաբուժ. եւ կանանց, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.:
ՄՈՒՍԽԷԼՕՎ Վ. Ս.—աչքի, երկուշ., չորեքշ. և ուրբաթ, 2—2½ ժ. ցեր.:
ՓԻՐԱԴՈՎ Ր. Բ.—վիրաբուժ., ամեն օր՝ 11—12 ժ. առ.:
ՊՕՊՕՎ Բ. Ա.—ականջի, կոկորդի եւ քթի, ուրբաթ, 2—2½ ժ. ցեր.:
ՐՑԽԻԼԱՁԷ Ն.—ատամի, ամեն օր՝ 9—10 ժ.
ՍՕԲՕԼԵՎՍԿԻՅ Գ. Վ.—վիրաբուժ., ամեն օր՝ 10—11 ժ. առ.:
ՏԻԿԱՆԱՁԷ Ի. Ն.—կանանց եւ մանկաբ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:

Բաժանմունքն ունի միկրօ-քիմիակ. և բակտերիօլ. հետազօտութիւնների համար լաբօրատօրիա: Կառավարում է աէրապ. բժ. Ն. Գ. Ֆէօդորօվ: Խորհրդի վճ. 50 կ.: Ստացիոն բաժան. 2 ր. և սած: Օպերացիաները, համախորհ., էլեքտր., մասսաժ., ծաղկի պատուաստ., ծծմայրերի քնն. և այլն առանձին վճարով:

(չ. ու. կ.) 1017. 100—28

ՎՕԿԶԱԼԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ

Երթևեկ հիւանդ. համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Ենֆիաճեանցի, տէլէֆօն 695.

Ս. ՎԱՇԱԿՄԱՁԷ ատամնաբոյժ, ամեն օր, 9—10 ժ. առ.:
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, Ներքին և երեխաների, 2—3 ժամը:
ԴԻԱՍԱՄԻՁԷ սիֆիլիս, վեներ. եւ կաշուի հիւ. ամեն օր, 11½—12½ ժ.
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը:
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ ամեն օր 12—1 ժ. բացի կիրակի օրերից, կոկորդի քթի և ականջի:
Վ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը, 2—2½ ժ., աչքի հիւանդ.:
Ն. Գ. ՖԷՕԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 11—12 ժ., Ներքին և երեխայոց հիւանդ.:

Հիւանդանոցում կատարվում են միկրոսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճարը խորհրդի համար 50 կոպէկ: (չ. ու. կ.) 1032. 100—27

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱԶ" ՀԻՒՐԱՆՈՑ

Երեւանեան հրապարակ, տ. Միրզօյեանի, տէլէֆօն 358.

✦ ԹԻՖԼԻՍՈՒՄ ✦

Անպայման մաքրութիւն անդորրութիւն և հանգստութիւն, էլեքտրական լուսաւորութիւն տէլէֆօն և վաննաներ: 50 համարներ՝ 1 րուբ. սկսած: Քաղաքավարի և չափաւոր աշխատող ծառայողներ:

✦ Գ. պ. վօյաժօրներին և ամսով վարձողներին մեծ ԶԵՂՉ ✦

ՄԵՆԻՈՒ:

I. ճաշ՝ 2 կեր.՝ 60 կ., 1 բ. օղի և 1 բ. գինի: II. ճաշ՝ 3 կեր.՝ 75 կ., 1 բ. օղի, 1 բ. գինի, 1 թաս սուրճ:
III. ճաշ՝ 4 կեր. 1 ր., 1 բ. օղի, կէս շ. գինի և 1 թ. սուրճ: IV. ճաշ՝ 5 կեր. 1 ր. 50 կ., 1 բ. օղի, կէս շ. գ. և 1 թ. սուրճ

Յարգանքով՝ Ի. Կոչքիլայա և Ն. Սիխարուլիձէ

(օ. մ.) 870. 100 - 35

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ

Լօրիս-Մելիքօվսկայա, № 6, պոստին մօտ:

ԽՐՕՄՕԼԻՏՕԳՐԱՖԻԱՅՈՒՄ

ԼԵՎԻ ԵՒ ՄԵՍՆԻԿ ԸՆԿ.

Ընդունվում են պատուէրներ լիտօգրաֆիական ամեն տեսակ աշխատանքների: Չափաւոր գներ: Գեղեցիկ և ճիշդ կատարումն: Յատկապէս այցետոմսերի և հաշւեթղթերի պատուէրներ: (կ.) 990. 12—8

Հրաւէր

Կիրակի, նոյեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 11-ին, հրաւիրվում են երկրորդ և վերջին ժողովի Շամքորեցոց ս. Աստուածածին եկեղեցու չափահաս ծխականները՝ ընտրելու երեցփոխ և 2—4 հոգաբարձուներ, նոյնպէս և քննութեան առնելու նոյն եկեղեցու ծխական դպրոցին վերաբերեալ մի ամենակարևոր հարց, որի համար յայտնելով՝ խնդրում եմ աշխատել ներկայ գտնվել ժողովին:

Գործակալ՝ Ղևոնդ ք. Մամիկոնեան

Առաջին տպագրութիւնը սպառված լինելով՝ լոյս տեսաւ

ԼՈՒՍԱԲԵՐ

ԵՐՐՈՐԴ տարվայ երկրորդ տպագրութիւնը:

ԳԻՆՆ Է՝ I տարի—30 կ., II տարի—45 կ., III տարի—55 կ. և IV տարի 65 կ.:

Դիմել գրավաճառներին:

(կ.) 1150. 5—4

Золотая медаль Лондонъ 1893 г.


ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ!
ПРОВИЗОРА
Г. Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ И ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1 кус. 50 к. ½ кус. 30 к.

Главн. складъ у Г. Ф. Юргенсъ, Москва

89. 24—20

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի մրգատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր: Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ:

(չ. կ.) 1105. 15—8

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!!

2 ր. 75 կ.:

Ուղարկում ենք վերադիր վճ. «Տրիումֆ» չէվիօտ, 4¼ արշ., տղամարդկանց հագուստի համար: Չնայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է: Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Ճանապարհածախքը 55 կ.: Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշւին: Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО", г. Лодзь, № 15.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով:

(չ. կ.) (В. 58110 947. 0—16

Լոյս տեսաւ և վաճառվում է

ՓԱՐՈՍ

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1910 ԹՒԱԿԱՆԻ

Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ: Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդուածները, գրած յատկապէս օրացոյցի համար: Ունի հայերէն մէջ դեռ լոյս չը տեսած արժէքաւոր յաւելուած «ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ» վերնագրով, որի մէջ զետեղված են քառասունհինգ հայ գրագէտների պատկերները իրանց համառօտ կենսագրական և գրական դէմքը որոշող յօդուածներով: Վեհ. Կաթողիկոսի և Մինաս Չերազի պատկերներով:

ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

Մասն I. 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պսակի արարողութեան թոյլատրելի օրեր, 4) Օրացոյց 1910 թւականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Որ օրը խանութները պիտի փակել:

Մասն II. 7) Զեմստվօ, 8) Օրէնսգրքեր, 9) ա) Զինուորագրական կանոններ, բ) Ինչ արժէ զինուորական ծառայութիւնը, 10) Մեծ պետութիւնների զինուորական բիւջէները, 11) Քաղաքական. Մերձ. Արև. վերածնութիւնը, Վորքման, 12) Երկրաբանական. Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բևեռի բացումը, 14) Աստղագիտութիւն. ա) Տարվայ յարատևութիւնը, բ) Տիեզերք. Տարրական հասկացողութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական աղիւսակ, 15) Գիտական երազահան. ա) Երազների վաղեմի բացատրութիւնը, բ) Երազները կեանքի արտացոլումներ են, գ) Երազի հոգեբանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) Առողջապահական. ա) Մենք շատ ենք ուտում, բ) Սննդի նորմալ բաժինը 24 ժամվայ համար, գ) Մարսողութեան ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու ննջարանը, զ) Հագուստը, 17) Գիւղատնտեսական. Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան, 18) Գիտական. Ջուրը. Յ. Ակունեան: 19) Լեզուագիտական. ա) Էսպերանտօ կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տիրապետութիւնը, գ) Բարբեր. մեռելների այրումը, 20) Ֆելիէտօն. Կապը կտրած կինը. Նար-Դոսի, 21) Դպրոցական. ա) Ուսումը ապագայում. Ղ. Աղայեան, բ) Ազատ մանկան տունը. Կ. Վէնցելի, 22) Կենսագրական. ա) Մատթէոս II, Կաթողիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 23) Առևտրա-Արդիւնաբերական. ա) Ընդհանուր ակնարկ, բ) Առևտրական և ֆինանսական հաստատութիւններ, գ) Գիւղական բանկեր. Ս. Ղալաչեան, դ) Հարկեր և տուրքեր, ե) Պարապմունքի հարկեր, զ) Նոտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Տուգանքի թուղթ, ժա) Կանխավճարի մասին, ժբ) Նաւթ, 24) Պոստ. (Կանոնադր. Նորագոյն հրատարակ.: Այս տարի վերցված է միայն ներքին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն սակագներով և ցուցակներով): 25) Անեկդօտ, 26) Զուարճալիք. ա) Զուարճալի խնդիրներ, բ) Ինչպէս գտնել մէկի տարիքը, գ) Տասներկու անաջող փորձ (սալօնի խաղեր), 27) Ծովը. Վ. Փափազեանի, 28) Ստատիստիկա, 29) Արհեստակցական:

Յաւելուած: ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ: Գեղեցիկ թղթի վրա, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդուածներով:

Օրաց. մէջ զետեղված է մի հետաքրքրաշարժ խնդիր, որին լուծողը ստանում է պրեմիա:

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Օտար քաղաքացիներին 100 օրինակ պահանջելու դէպքում 20% զեղչ և պոստի ծախսը մեզ վրա: Դիմել՝ Типографія «Эпоха» В. Вартанянцу.

(ե. հ. կ.) 1137. 8—8

ԿՕՍՄԵՏԻԿԱՅԻ ԵՒ ՊԱՐՖԻՒՄԵՐԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒԽԻ ՆԻՑՑԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ
ՇԱՄՊՈՒ, ԿՐԷՄ, ՍԱՊՕՆ, ՇՊԱՐ, Օ-ԴԷ-ԿՕԼՕՆ, ԼՕՍԻՕՆ

ՍԱՆԱԴԵՐՄԻ ՆԻՑՑԱՅՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՄԵՆՈՒՐԵՔ,

Ռուսաստանի բաժանմունքը. Москва, Никольская, д. Греческаго монастыря, телеф. 52—19.

(1, 8, 15) (П. 141697) 1148. 5—3

НАСТОЯЩІЯ ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ЗИНГЕРЪ

Նորին Մեծութեան Պալատի մատակարար

խանութի ցուցանակը ճանաչված մրցանակաւորութիւնից

1 ՌՈՒԲ. ՍԿՍԱԾ {ՎՃԱՐԸ ՄԱՍ-ՄԱՍ} 1 ՌՈՒԲ. ՍԿՍԱԾ

Ձեռքի կարեմեքենաներ՝ 25 րուբ. սկսած՝ ծախվում են Ռուսաստանում ամենուրեք, բացառապէս սեփական խանութում:

Թիֆլիսում 3 սեփական բաժանմունքներ.

1) Գոլովինսկի պր., տ. Միրիմանովի, Փոխարքայի պալատի դիմացը.
2) Վօկզալնայա փող., տ. Ենֆիաճեանցի.
3) Հալաբար, Կախէտինսկայա փող., տ. Հասան-Ջալալեանի.

•○ Զգուշացէք կեղծիքներից! ○•

THE SINGER MANFG. CO. TRADE MARK

Ֆաբրիկայի դրօշմ

[illegible] մատակարար

(կ.) 997. 20—8

„ՊՐՈՎՕԴՆԻԿ"

1897 թ.

ФАБРИЧ. КЛЕЙМО ПРОВОДНИКЪ РИГА

1888

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՌԻԳԱՅՈՒՄ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սոլօլակսկայա փող., № 4

ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝

Ռեզինէ, կանեփի և ուրիշ թևնոցներ ամեն ինչի համար.
Ռեզինէ տեխնիկական և էլեքտրօ-տեխնիկական առարկաներ և լուսանկարչական պիտոյքներ.
Իրեղէններ եղջերեայ ռեզինից և էբօնիտից.
Առանձնացնող և կաբէլային պիտոյքներ.
Խիրուրգիական և բժշկական ռեզինէ իրեղէններ.
Ռեզինէ խաղալիքներ և խաղագնդակներ.
Ռեզինէ գալանտերէյնի ապրանքներ.
Ջնջող ռեզին «Слонъ» մարկայով.

№ 2 1035. 0—4

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская № 3.